ուրս Զատկի, և ապա ուրախութեամբ դարձաւ 'ի Յոպպէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս (1859)։ Եւ 'ի հասանիլ նորա յաշխարհ՝ առաքեաց Նիկողայոս Կայսրն նշան պատուոյ, այլ զի Յովհաննէս Պատրիարք վախճանեալ էր՝ դարձաւ յետս։

Ի սմին ժամանակի Արաբացիք Դամասկոսի և Լիբանանի յարեան 'ի վերայ քրիստոնէից, և կոտորեցին զբազումս 'ի նոցանէ, յայտնապէս կողոպտեցին և աւարի առին զտունս, զեկեղեցիս և զվանօրայս, եւ հրձիգ լեալ այրեցին զնոսա, զքահանայս զոր կալան՝ սպանին և եղեալ ողբ, աղաղակ և տագնապ մեծ։ ընդ որս կողոպտեալ այրեցաւ և հիմնայատակ կործանեցաւ Ս. Սարգիս վանքն Հայոց առաջնորդարանաւ եւ սենեկօք ուխտաւորաց, եւ Առաջնորդ տեղւոյն Գաբրիէլ վարդապետ մեզապուր զերծաւ իւրովքն հանդերձ 'ի բերդն։ քրիստոնեայք պաշարեալք յայսպիսի յաղէտս տարակուսանաց, ապրեալք 'ի սրոյ թշնամեաց՝ սկսան խումբ խումբ փախչիլ 'ի Պերութ մերկ և կողոպուտ, տանջեալք 'ի քաղց և 'ի ծարաւ։ գործ դժնդակ դառնութեանս այսորիկ հնչեաց յականջս Եւրոպիոյ, աբշաւեաց Գաղղիական զօրքն հրամանաւ Նաբոլիոնի երրորդի 'ի Պերութ և անտի սփռեցան 'ի լերինս Լիբանանու հետամուտ լեալ Տէ-ըզէ կոչեցեալ ցեղին։ Հասին զօրք եւ պաշտօնեայք 'ի Դրանէ Օսմանեան Պետութեան, որոց գլուխ էր նա ինքն Ֆուատ Փաշայ։ պատժեցան բազումք 'ի չարագործաց 'ի Դամասկոս, յուղեցան տունք այլազգեաց՝ եւ ժողովեալ ամբարեցաւ 'ի մի վայր կողոպուտք քրիստոնէից, սահմանեցաւ պարէն թշուառ մերկացելոց։ ապա հատուցաւ 'ի գանձէ Տէրութեան վնասք քրիստոնէից, բայց տեւեաց ժամանակս ինչ։ ապա վերստին շինեցան և հաստատեցան եկեղեցիք և վանօրայք իւրաքանչիւր ազգի՝ եւ կացին ըստ առաջնոյն 'ի տեղիս իւրեանց։ բայց վանքն Հայոց եկաց մնաց յաւերակի իւրում եւ չինեցաւ միայն եկեղեցին։ էին եւ ընդ Ֆուատ Փաշայի պաշտօնեայք յազգէն Հայոց, ընդ որս էր և բժիշկ Սէրվիչէն Էֆէնտի, որ եւ ընդ որդւոյ Փաշայի եկն յերուսաղէմ սակս ազգային խնդրոյ իրիք, եւ Յովհաննէս Պատրիարք արար նոցա ընդունելութիւն մեծ, բայց չե-